## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ 20Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ԴՐՈՇԱԿԱՁՈՂԻ, ԴՐՈՇԱԿԱՁՈՂԻ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ARMEPS.AM ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Մարտունի «27»«մայիսի» 2026թ.
ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Անդամներ՝ Ս. Աբրոյան
Վ. Թամոյան
Կ. Դավթյան
Թ. Դավթյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Սիմոնյան

1. **«ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և արդյունքների ամփոփման մասին**

1.1 «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2026թ. մայիսի 27-ը ժամը 16:30-ն: Մրցույթի հետ կապված հարցումներ և պարզաբանումներ չեն կատարվել:

1.2 «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտերի բացումը կատարվել է Armemps համակարգի միջոցով՝ մայիսի 27-ին ժամը 16:30-ին:

1.3 Ընդունել ի գիտություն, որ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը<br>Էլ. փոստ, հեռ. համար |
|---|---|---|---|
| 1 | «ԿՈՓ» ՍՊԸ | ք.Մարտունի Վ.Մամիկոնյան 1 | Kop_ooo@mail.ru<br>077 64 73 73 |

**2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին**

ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները

| N | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային արժեքը /թվերով և տառերով/ | Ինքնարժեք և շահույթ /թվերով և տառերով/ | ԱԱՀ /թվերով և տառերով/ | Ընդհանուր գինը /թվերով և տառերով/ |
|---|---|---|---|---|---|
| Չափաբաժին | | **591,810** | | | |
| 1 | «ԿՈՓ» ՍՊԸ | | 591000<br>(հինգ հարյուր իննսունմեկ հազար) | 0 | 591000<br>(հինգ հարյուր իննսունմեկ հազար) |

**Մասնակիցների գնային առաջարկներում թվաբանական անճշտություններ չեն հայտնաբերվել:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:**

**3. Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի կողմից փաստաթղթերն ուսումնասիրելու արդյունքում հայտնաբերվել է հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.**

**3.1** **«ԿՈՓ» ՍՊԸ** հայտում բացակայում է հրավերով սահմանված նախկինում կատարված նմանատիպ աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև աշխատակազմում ներառված մասնագետների համաձայնությունները առ այն, որ «**ԿՈՓ**» ՍՊԸ -ն ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող ճանաչվելու դեպքում՝ պատրաստ են ներգրավվելու տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման գործընթացին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0**

3.4 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ Կարգ/ 41-րդ կետի պահաջներով, որոշեց՝ կասեցնել նիստը և ծանուցել մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում/ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0**

**4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,**

**ժամը և վայրը հաստատելու մասին**

4.1 **ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07** ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել օրենքով սահմանված կարգով և ժամկետում մասնակիցների կողմից հայտերի շտկումը իրականացնելուց հետո, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունու համայնքապետարան, Շահումյան 2 հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0**

**5. ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստը շարունակվեց 01.06.2026թ. ժամը 10:00-ին**

**- Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը ,անդամներ՝ Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ. Դավթյանը, Ս. Աբրոյանը և հանձնաժողովի քարտուղար ՝ Կ. Սիմոնյանը:**

5.1 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0

**6. «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:**

6.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **«ԿՈՓ» ՍՊԸ -ի** հայտում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

6.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«ԿՈՓ» ՍՊԸ -ի** կողմից ներկայացրած շտկումները :

6.3 Մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից «**ԿՈՓ**» ՍՊԸ -ի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

**7. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու ինչպե նաև անգործության ժամկետ սահմանելու մասին**

7.1 Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7.2 «ԳՄՄՀ-ԳՀԽԾՁԲ-26/07» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«ԿՈՓ» ՍՊԸ -ն**, որպես ոչ գնային պայմաններով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

7.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

7.4 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում կանխիկ փողի տեսքով կամ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային երաշխիքի տեսքով ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Ա. Քոչարյան

Անդամներ՝ ______________ Վ. Ծամոյան

______________ Կ. Դավթյան

______________ Թ.Դավթյան

______________ Մ.Աբրոյան

Քարտուղար՝ ______________ Կարեն Սիմոնյան